

Կ-198-04.12.2017,12.01.2018-ՏՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆԿՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 1-ի ՀՕ-285 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 14-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «ա» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «ա) մշակում եւ իրականացնում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի քաղաքականությունը»:

2) 1-ին մասում ուժը կորցրած ճանաչել «գ» կետը:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) վերնագրում եւ 1-ին նախադասության մեջ «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ» բառերը փոխարինել «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ»:

2) 1-ին մասի «ժ» եւ «ժա» կետերից, հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումների, տեխնոլոգիաների» բառերը:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետից հանել «,հատուկ նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների» բառերը:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի «գերատեսչական» բառը փոխարինել «ենթաօրենսդրական» բառով:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 19.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Միջուկային տեղակայանքները շահագործումից հանելու ֆինանսական միջոցները կուտակվում են պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացված հատուկ հաշվին:»:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «դ» եւ «ե» կետերում հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումների, տեխնոլոգիաների» բառերը:

2) «ը» կետում հանել «եւ հատուկ» բառերը:

ՀՈՂՎԱԾ 8. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «ա» կետից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումների» բառերը»:

2) «բ» կետից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումներին» բառերը»:

3) «գ» կետից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումներ, տեխնոլոգիաներ» բառերը:

4) «ե» կետից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումներն ու տեխնոլոգիաները» բառերը:

Հոդված 9. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասից, 28-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերից եւ 29-րդ հոդվածից հանել «եւ հատուկ», «, հատուկ սարքավորումների եւ տեխնոլոգիաների» բառերը:

Հոդված 10. Օրենքի 10-րդ գլխի վերնագրից հանել «ԵՎ ՀԱՏՈՒԿ», «,ՀԱՏՈՒԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ» բառերը:

Հոդված 11. Օրենքի 31-րդ հոդվածի`

1) վերնագրից եւ 2-րդ մասից հանել «եւ հատուկ», «,սարքավորումների, տեխնոլոգիաների» բառերը.

2) 1-ին մասից հանել «եւ հատուկ», «, սարքավորումներն ու տեխնոլոգիաները» բառերը:

Հոդված 12. Օրենքի 32-րդ հոդվածի`

1) վերնագրից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումների եւ տեխնոլոգիաների» բառերը.

2) 1-ին մասի 1-ին պարբերությունից, 1-ին մասի «գ» եւ «դ» կետերից հանել «եւ հատուկ», «, հատուկ սարքավորումների եւ տեխնոլոգիաների» բառերը.

3) 1-ին մասի «ա կետից» հանել «,սարքավորումները եւ տեխնոլոգիաները» բառերը.

ՀՈՂՎԱԾ 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձման օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆԿՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 1-ի ՀՕ-285 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 14-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «ա» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «ա) մշակում եւ իրականացնում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի քաղաքականությունը»:

2) 1-ին մասում ուժը կորցրած ճանաչել «գ» կետը:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) վերնագրում եւ 1-ին նախադասության մեջ «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ» բառերը փոխարինել «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ»:

2) 1-ին մասի «ժ» եւ «ժա» կետերից, հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումների, տեխնոլոգիաների» բառերը:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետից հանել «,հատուկ նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների» բառերը:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի «գերատեսչական» բառը փոխարինել «ենթաօրենսդրական» բառով:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 19.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Միջուկային տեղակայանքները շահագործումից հանելու ֆինանսական միջոցները կուտակվում են պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացված հատուկ հաշվին:»:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «դ» եւ «ե» կետերում հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումների, տեխնոլոգիաների» բառերը:

2) «ը» կետում հանել «եւ հատուկ» բառերը:

ՀՈՂՎԱԾ 8. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «ա» կետից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումների» բառերը»:

2) «բ» կետից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումներին» բառերը»:

3) «գ» կետից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումներ, տեխնոլոգիաներ» բառերը:

4) «ե» կետից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումներն ու տեխնոլոգիաները» բառերը:

Հոդված 9. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասից, 28-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերից եւ 29-րդ հոդվածից հանել «եւ հատուկ», «, հատուկ սարքավորումների եւ տեխնոլոգիաների» բառերը:

Հոդված 10. Օրենքի 10-րդ գլխի վերնագրից հանել «ԵՎ ՀԱՏՈՒԿ», «ՀԱՏՈՒԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ» բառերը:

Հոդված 11. Օրենքի 31-րդ հոդվածի`

1) վերնագրից եւ 2-րդ մասից հանել «եւ հատուկ», «սարքավորումների, տեխնոլոգիաների» բառերը.

2) 1-ին մասից հանել «եւ հատուկ», «, սարքավորումներն ու տեխնոլոգիաները» բառերը:

Հոդված 12. Օրենքի 32-րդ հոդվածի`

1) վերնագրից հանել «եւ հատուկ», «,հատուկ սարքավորումների եւ տեխնոլոգիաների» բառերը.

2) 1-ին մասի 1-ին պարբերությունից~~1-ին մասից~~, 1-ին մասի «գ» եւ «դ» կետերից հանել «եւ հատուկ», «, հատուկ սարքավորումների եւ տեխնոլոգիաների» բառերը.

3) 1-ին մասի «ա կետից» հանել «,սարքավորումները եւ տեխնոլոգիաները» բառերը.

ՀՈՂՎԱԾ 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձման օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-198-04.12.2017,12.01.2018-SՀ-011/1) վերաբերյալ

Առաջարկության փոփոխության /լրացման/ հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը /փոփոխությունը, լրացումը/	Առաջարկության վերաբերյալ հեղինակի /հիմնական զեկուցողի եզրակացությունը/	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի, 2-րդ մաս	Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «1-ին մասից» բառերը փոխարինել «1-ին մասի 1-ին պարբերությունից» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: